

**ՀՀ-ՈՒՄ ՄԵՂՎԱՔՐՈԹՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԵՆԹԱՃՅՈՒԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

4. Գ. ՄԱՆԱՍՅԱՆ

Մեղվաքրածությունը ՀՀ ագրարային հատվածի ավանդական, շահութաբեր և էկոլոգիապես մաքուր ենթաճյուղերից է¹: Հայկական մեղվաքրածական մթերքների բարձր որակը բացատրվում է հանրապետության լանդշաֆտային գոտիների ագրոէկոլոգիական պայմանների բազմազանությամբ: Ցայտուն արտահայտված լանդշաֆտային գոտիականությունն ու մեղրատու բույսերի բազմազանությունը մեղվաքրածական մթերքներին տալիս են առանձնահատուկ համ, հոտ և էկոլոգիական մաքրություն:

Վերջին տարիներին հանրապետության բնակչության մեկ շնչի հաշվով արտադրված մեղրի միջին տարեկան ծավալները չեն գերազանցում 0.573կգ սահմանը, որը մի քանի անգամ ցածր է սահմանված չափաքանակից (7.3կգ): Ընդ որում, մեղվաքրածական մթերքների արտադրական ինքնարժեքը, ցավոք, այնքան բարձր է, որ այն համարվում է գործունեության ցածր շահութաբեր ոլորտ: Այժմ մեղվաքրածությունը մեզանում դասվում է ագրարային հատվածի մասնագիտացման լրացուցիչ ենթաճյուղերի շարքին և դուրս է մնացել պետական հովանավորության շրջանակներից:

Տավուշի մարզի որոշ մեղվաքրածական տնտեսություններում մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ թեպետ վերջին տարիներին մեղրի արտադրության համար կատարվող անմիջական աշխատանքային ծախսերը կրճատվել են, սակայն դրանց մակարդակը այսօր էլ բավականին բարձր է: Այսպես, եթե 1996-2000թթ. մեկ ցեմտներ մեղրի արտադրության վրա կատարված անմիջական աշխատանքային ծախսերի միջին մակարդակը կազմել է 280-281 մարդ-ժամ, ապա 2001-2005թթ. կրճատվել և դարձել է 202-213 մարդ-ժամ: Իսկ Աշոցքի և Իջևանի տարածաշրջանների մեղվաքրածական մթերքների բոլոր տեսակների արտադրական ինքնարժեքի շարժընթացը 2001-2005թթ. բնութագրվել է կտրուկ տատանումներով, ըստ որում՝ առանձին գյուղական համայնքներում դրանք նվազել են ոչ միայն ըստ տարիների, այլև տեղամասերի տարբեր մեղվանոցներում. սա վկայում է, որ դրանցում առկա է արտադրական ինքնարժեքի իջեցման ներուժը:

Ի դեպ, կատարվող ծախսերի հիմնական տարբը կերերին է բաժին ընկնում: Իսկ ամբողջ ծախսերի կառուցվածքում դրանց տեսակարար կշիռը 1996-2000թթ. 49.5%-ից 2001-2005թթ. իջել է 40.3%-ի:

¹ Հայաստանում դեռևս հնագույն ժամանակներից է զարգացած եղել լեռնային տիպի մեղվաքրածությունը: Դեռևս Ջսենոփոնը «Անաբասիս» գրքում (մ.թ.ա. 397-371թթ.) նկարագրել է, որ պատմական Հայաստանի լեռնային գյուղական բնակավայրերում զբաղվում էին մեղվաքրածությամբ: Աշխատանքի հասարակական առաջին խոշոր բաժանումից հետո անասնաքրածության ներճյուղային կառուցվածքում կարևոր տեղ սկսեց զբաղեցնել ընտանի մեղվաքրածությունը (տե՛ս Ն. Հակոբյան և ուրիշներ, Մեղվաքրածություն, Եր., 1997, էջ 5):

Կերերի ծախսերի բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է.

ա) մեղուների համար որպես կեր ծախսվող մեղրի արտադրական ինքնարժեքի բարձր մակարդակով,

բ) քանկ գնահատվող արհեստական կերերի (մասնավորապես շաքարի օշարակի) հաճախակի օգտագործմամբ,

գ) մնացածը բաժին են ընկնում աշխատավարձին, հիմնական միջոցների մաշվածությանը և դրանց վերականգնման ընթացիկ ու տրանսպորտային ծախսերին:

Հետևաբար, մեղվաբուծության մեջ կատարվող ծախսերի կրճատման հիմնական ուղին կայուն կերային բազայի ստեղծումն է: Դա հրատապ է հատկապես հանրապետության լեռնային երկրագործության զարգացած տարածաշրջանների համար, որտեղ պատշաճ ուշադրություն չեն դարձնում ենթաճյուղի կերային բազայի բարելավման և ռացիոնալ օգտագործման հարցերին: Մեղրատու ռեսուրսներից կազմված հաշվեկշռի վերլուծությունից պարզվում է, որ նեկտարատու բուսականության զբաղեցրած մակերեսները կազմում են հանրապետության ամբողջ տարածքի մոտ 60-65%-ը, որտեղ կան նեկտարի բավականաչափ պաշարներ՝ 115-120 հազ. տ:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ մեղվաբուծության կերային հաշվեկշռում, ըստ բուսականության տեսակային կազմի բազմազանության և զբաղեցրած մակերեսների հանրապետությունում մեծ դեր է կատարում լեռնամարգագետնային և լեռնաանտառային լանդշաֆտային գոտիների մեղրատու բուսականությունը (համապատասխանաբար՝ 654 հազ. և 295 հազ.հա տարածք): Սակայն հիմնական մեղրատու բուսականության անկայուն մեղրաբերքը և եղանակային պայմանները (վեգետացիոն փուլի ընթացքում անձրևային և քամոտ օրերի հաճախակիությունը, 10°C -ից բարձր ջերմաստիճանով օրերի պակասը և այլն) թույլ չեն տալիս ամբողջ վեգետացիոն փուլի ընթացքում ստեղծել կայուն մեղրատու հարահոռ:

Քանի որ հանրապետությունում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի զբաղեցրած ցանքատարածությունները կազմում են 325.2 հազար հա², ուստի հրատապ է դառնում դրանց նեկտարային բերքատվության բարձրացման հարցը:

ՀՀ - ում մեղվաբուծությունը չի կարող համակողմանի զարգանալ ագրարային հատվածի բուսաբուծության ենթաճյուղից կտրված, քանի որ այնպիսի մշակաբույսեր, ինչպիսիք են երեքնուկը, առվույտը, հլածուկը, դեղին իշառվույտը, մեղրածուծը, կորնզանը, մանանեխը և այլն, համարվելով պլոտեինի ստացման աղբյուր, միաժամանակ լավագույն մեղրատուներ են: Դրանցից ստացված մեղրը բնութագրվում է բարձր համային և բուժիչ հատկանիշներով: Սակայն ծաղկափնջակալման փուլում կերային խտտերի հնձման երաշխավորված ժամկետները, ազոտային պարարտանյութերի, թունաքիմիկատների և բույսերի պաշտպանության այլ միջոցների լայն կիրառությունը, որպես կանոն, ենթաճյուղին զրկում են մեղրաբերքից:

Ի դեպ, բարձր չափաքանակով ազոտային պարարտանյութերի կիրառումը նվազեցնում է ոչ միայն խտտային բուսականության նեկտարային ռեսուրսների արդյունավետությունը, այլև բացասական ազդեցություն է թողնում հողերի որակական վիճակի վրա՝ որակագրկելով սննդամթերքը, այդ թվում նաև մեղրը¹:

¹ Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2005», Վիճակագրական ժողովածու, Եր., 2005, էջ 299:

² ՀՀ-ից իբրև նմուշ Եվրոպա տարված մեղրերից միայն Շիրակի մարզի մեղրն է համապատասխանում եվրաչափանշվածքին, իսկ Վայոց Ձորի ու Սյունիքի մեղրը գրեթե ամբողջությամբ չի համապատասխանում: Ուստի այսօր առաջնահերթ խնդիր կարելի է համարել «եվրահամարանիշ» ստանալու գործընթացը, մոնիթորինգի խնդիրները և հայկական մեղրի համապատասխանեցումը Բրյուսելի հանձնաժողովի սահմանած չափանշվածքներին:

Մեր ուսումնասիրությունները Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանում ցույց են տալիս, որ այդ պայմանին առավել լրիվ բավարարյում է իշառվույտի ցանքաշրջանառությունը: Հաշվի առնելով այդ մեղրատու մշակաբույսի դրական հատկանիշները՝ մշակել ենք ցանքաշրջանառության 12 տարբերակ՝ որպես փորձարկվող մշակաբույսեր օգտագործելով մեղրածուծը, գարին, աշնանացան ցորենը, դեղին իշառվույտը, կորնգանն ու մանանեխը: Ստուգիչ տարբերակների համար օգտագործել ենք մեղրածուծն ու կորնգանը, աշնանացան ցորենը, գարին և մանանեխը:

Ցանքաշրջանառության բոլոր տարբերակներում պարարտանյութեր չեն կիրառվել: Մշակաբույսերի ընտրությունը պայմանավորված է քննարկվող ենթաճյուղի մասնագիտացման արտադրական ուղղություններով (մթերատու-ապրանքային, մթերատու-փոշոտող և փոշոտող-մթերատու): Ստացված արդյունքները 1 կգ արտադրանքի հաշվով ըստ հետևյալ գործակիցների տեղափոխել ենք մեղրային միավորների (ՄՄ). մեկտարային արդյունավետությունը՝ 0.38 ՄՄ, ծղոտինը՝ 0.001 ՄՄ, խոտինը՝ 0.01 ՄՄ, սերմնացու մեղրածուծինը՝ 0.5 ՄՄ, իշառվույտինը՝ 0.25 ՄՄ, երեքնուկինը՝ 1.0 ՄՄ, ցորենի հատիկինը՝ 0.032 ՄՄ, գարունը՝ 0.022 ՄՄ, մանանեխինը՝ 0.06 ՄՄ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ցանքաշրջանառության տարբերակները իշառվույտի մասնակցությամբ: Ընդունված են հետևյալ կրճատումները. Մ + Ա1՝ առաջին տարվա առվույտը մեղրածուծի արտաքին թաղանթով, Մ + Ի1՝ առաջին տարվա իշառվույտը մեղրածուծի արտաքին թաղանթով, Գ + Ի1՝ առաջին տարվա իշառվույտը գարու արտաքին թաղանթով, Ա2՝ երկրորդ տարվա առվույտը, Ի2՝ երկրորդ տարվա իշառվույտը, ԱՑ՝ աշնանացան ցորենը, Գ՝ գարին, Մխ՝ մանանեխը, Մ՝ մեղրածուծը, ՄՓ՝ ստուգիչ փեթակը:

Աղյուսակ 1

Արտադրանքը ըստ ցանքաշրջանառության տարբերակների, 2000-2005թթ. (Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի օրինակով)

ՄՓ	Ցանքաշրջանառությունն ըստ տարիների					Միջին հաշվով արտադրանքը 2000-2005թթ.	
	2001	2002	2003	2004	2005	ՄՄ / հա-ով	հազ. դրամով
1	Մ + Ա1	Ի2	ԱՑ	Գ	Մխ	143.8	222.0
2	Մ + Ի1	Ի2	---	---	---	335.4	522.0
3	Մ + Ի1	Ի2	Մխ	---	---	269.0	414.0
4	Մ + Ի1	Ի2	ԱՑ	---	---	255.7	393.0
5	Գ + Ի1	Ի2	Մ	---	---	245.7	378.0
6	Գ + Ի1	Ի2	Մխ	---	---	174.2	268.0
7	Գ + Ի1	Ի2	ԱՑ	---	---	165.6	255.0
8	Գ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	---	365.6	562.0
9	Մ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	Մխ	316.0	486.0
10	Մ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	ԱՑ	312.4	480.0
11	Մ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	Մ	306.4	471.0
12	Գ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	Մխ	263.2	405.0
12	Գ + Ի1	Ի2	Մ + Ա1	Ա2	ԱՑ	257.1	369.0

Աղյուսակի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ միջին հաշվով ըստ տարիների 1, 7, 8, 9 և 10 ցանքաշրջանառություններն ունեն ամենամեծ արդյունավետությունը՝ 306.4 -ից մինչև 365.6 ՄՄ/հա (471.0 հազ. դրամից մինչև 562.0 հազ. դրամ), որը թույլ է տալիս յուրաքանչյուր մեղվաբնտարանի քի հաշվով մեղվանոցների երաշխավորված մեղրային հաշվեկշիռը հասցնել մինչև 150 կգ շաքարին համարժեք արտադրանքի: Ըստ այդմ կարելի է ապրանքային մեղրի արտադրությունը

մասնագիտացված խոշոր տնտեսություններում, գյուղատնտեսական կոոպերատիվներում և գյուղացիական տնտեսություններում հասցնել 14.73 ± 0.39 ից մինչև 47.0 ± 0.23 կգ, իսկ կերային մեղրը՝ 16.45 ± 0.6 -ից մինչև 23.8 ± 0.33 կգ (< 0.001 -ից):

Այսպիսով, հաշվի առնելով մեղվաբուծության մասնագիտացման արտադրական ուղղությունները, դեղին իշառվույտի հիման վրա նեկտարային ռեսուրսների ստեղծման համար կարելի է երաշխավորել ցանքաշրջանառության հետևյալ տարբերակները՝ մասնագիտացված խոշոր տնտեսությունների համար՝ 8, 9, 10, գյուղատնտեսական կոոպերատիվների համար՝ 7, 8, 9, իսկ գյուղացիական տնտեսությունների համար՝ 1 և 7 տարբերակները:

Չափորոշիչ նյութերի հիման վրա կատարված հաշվարկներով պարզվել է, որ ՀՀ մեղվաբուծական տնտեսություններում մեկ ցենտներ ապրանքային մեղրի արտադրական ինքնարժեքն այժմ կազմում է 525.7 դրլար, որը 2000թ. փաստացի տվյալների հետ համեմատած՝ պակաս է 46.0% -ով: Եթե 2000թ. մեղվաբուծությունը հանրապետության գյուղացիական տնտեսություններում վնասաբեր էր (վնասաբերության մակարդակը կազմում էր մոտ 40%), իսկ խոշոր մասնագիտացված տնտեսություններում թեև աչքի էր ընկնում շահութաբերության ցածր մակարդակով (մոտ 8.5-10%), բայց ընթացիկ տարում մեղվաբուծական մթերքների սպասվելիք համախառն արտադրանքի ծավալը տնտեսավարող բոլոր սուբյեկտներում ամբողջությամբ կկազմի մոտ 31.2 հազ. դրլար, իսկ շահութաբերության միջին մակարդակը՝ 50-55 %:

Բացի դրանից, բերված տվյալների համեմատությունից պարզվում է, որ մեկ մեղվաընտանիքից սպասվելիք միջին տարեկան հաշվարկային դրամական եկամուտը կարող է կազմել 208 դրլար, իսկ հաշվարկային զուտ եկամուտը՝ 70-80 դրլար: Մինչդեռ մեղրատու բուսականության պաշարների և դրանց բազմազանության լիարժեք գնահատման հաշվարկները ցույց են տալիս, որ իրականում հանրապետության ամբողջ գյուղատնտեսական էնտոմոֆիլ մշակաբույսերի փոշոտման և նեկտարի բերքի հավաքման համար պահանջվում է 550-600 հազ. մեղվափեթակ: Այդ դեպքում մեղվաբուծությունից սպասվելիք գնահատումային տարեկան համախառն արտադրանքը միջին հաշվով կկազմի ավելի քան 110-120 մլն դրլար⁴:

Պետք է նշել, որ 2010-2025 թթ. յուրաքանչյուր մեղվաընտանիքի հաշվով սպասվելիք մեղրի ապրանքային արտադրանքը (մոտ 17-20 կգ սահմաններում), համեմատած հայկական դեղին և գորշ մեղուներին բնորոշ բարձր մթերատվության հետ (30-35 կգ), զգալիորեն քիչ է: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հանրապետության լանդշաֆտային ուղղածիզ գոտիներին բնորոշ են ոչ միայն մթերատու-ապրանքային կամ մթերատու-փոշոտող, այլև ծրարային մեղվաընտանիքներ ստանալու և գյուղատնտեսական էնտոմոֆիլ մշակաբույսերը փոշոտելու համար բարձրակարգ մայրացուների բազմացում նախատեսող ցեղային և փոշոտող-մթերատու արտադրական ուղղությունները:

Մեղվաբուծության, ինչպես նաև ագրարային հատվածի մյուս ենթաճյուղերում գյուղատնտեսական մթերքների արտադրության զործընթացում կարող են արդյունավետ օգտագործվել ինչպես լանդշաֆտային գոտիների ուղղածիզ հերթափոխության օրինաչափությունը, այնպես էլ բնության սեզոնային զարգացման

⁴ Հաշվարկները կատարել ենք ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գյուղատնտեսական բաժնի տվյալների:

⁵ Տե՛ս Ա. Պողոսյան, Մեղվաբուծության զարգացման և տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության թեկնածուի ատենախոսության սեղմնագիր, Եր., 2005, էջ 10-14:


առանձնահատկությունը: Ապացուցված է, որ մեղվաընտանիքների կենսաբանական ակտիվությունն աճում է լանդշաֆտային գոտիների ուղղաձիգ հերթափոխության համապատասխան (այն առավելագույնի է հասնում 1500-2000 մ բացարձակ բարձրությունների վրա տարածվող մարգագետնատափաստանային և անտառամարգագետնային լանդշաֆտների գոտիներում): Բացահայտվել է նաև, որ ցածրադիր գոտին աչքի է ընկնում կարճատև և թույլ, մինչդեռ լեռնային գոտին, ընդհակառակը, տևական և ուժեղ մեղրի բերքով: Լեռնային գոտում ըստ ժամանակի մեղվի բերքի սկիզբը ցածրադիր ու նախալեռնային գոտիների համեմատությամբ միջին հաշվով ուշանում է 50-60 օր (նեկտարատու բույսերի գոտիական տեղաբաշխման հերթափոխության հետ յուրաքանչյուր 500մ հարաբերական բարձրության վրա մեղրատուների ծաղկումը միջին հաշվով ուշանում է 15 օրով):

Հետևաբար, դրանք դիտելով որպես մեղվաբուծության տարածքային կազմակերպման բնակենսաբանական մախաղդյալներ, հանրապետությունում կարող են ձևավորվել մեղվաբուծության գոտիական մասնագիտացման հետևյալ հիմնական արտադրական ուղղությունները.

- 1) քոչվորական մեղվաբուծության մեղրատու-ապրանքային, մեղրատու-փոշոտող և փոշոտող համակարգերը.
- 2) ծրարային մեղվաբուծության մեղրատու-ապրանքային և մեղրատու-փոշոտող համակարգերը:


Գծապատկեր 1

Քոչվորային մեղվաբուծության (մեղրատու ապրանքային ուղղություն) ուղղաձիգ գոտիական համակարգի կառուցվածքը



Քոչվորական մեղվաբուծության մեղրատու-ապրանքային արտադրական ուղղության գոտիական մասնագիտացման համակարգի ձևավորման հիմքում ընկած է ապրանքային մեղվաբերքի մակարդակի և արդյունավետության գոտիական տարբերությունների ընձեռնած հնարավորությունների օգտագործումը (տե՛ս գծապատկեր 1), որպեսզի մեկ արտադարյից մյուսին կանոնավոր տեղափոխության

Քոչվորային մեղվաբուծության (մեղրատու փոշոտող ուղղության) ուղղածիզ գոտիական համակարգի կառուցվածքը



ՀՀ-ում լեռնային մեղվաբուծության մասնագիտացման այդ արտադրական ուղղությունը առավել տարածված է հյուսիսարևելյան և հարավարևելյան տարածաշրջանների լեռնաանտառային և լեռնատափաստանային լանդշաֆտների գոտիներում, որտեղ մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսությունները ձեռք են բերում ավելի հստակ արտահայտված փոշոտող մեղրատու արտադրական ուղղություն: Մասնավորապես, Տավուշի և Սյունիքի մարզերում փոշոտող-մեղրատու և մեղրատու-փոշոտող արտադրական ուղղություններն առավել արդյունավետ են ենթադրյալի տարածքային կազմակերպման այն գործելաձևի կիրառման դեպքում, երբ գարնանը կիրառվում է մեղվաընտանիքների տեղափոխությունը Աղստև, Գեքեղ, Որոտան և Մեղրի գետերի ողողատներին հարող մեղրատու քիտուտների ու անտառային զանգվածների վրա, իսկ այնուհետև քոչում են գյուղատնտեսական էնտոմոֆիլ մշակաբույսերի (առվույտ, երեքնուկ, կորնզան և այլն) ցանքատարածություններ:

Լեռնային մեղվաբուծության գոտիական մասնագիտացման քննարկվող արտադրական ուղղությունն ամբողջությամբ կարող է ընդգրկել գրեթե ամբողջ հյուսիսարևելյան և հարավարևելյան տարածաշրջանների լեռնաանտառային լանդշաֆտների գոտին: Սակայն դրանցից յուրաքանչյուրն առայժմ ունի սահմանափակ տարածման արեալ, քանի որ առավելապես զարգանում են մեկ, հազվադեպ՝

Կարծում ենք՝ հանրապետության հարավարևելքում և հյուսիսարևելքում (մասնավորապես, Մեղրու և Բերդի տարածաշրջաններում) ծրարային մեղվաբուծության ուղղածիզ գոտիական համակարգերի ձևավորման հիմքում ընկած է լինելու մեղուների բազմացնող և ծրարային մեղուներ օգտագործող մասնագիտացված տնտեսությունների համակողմանի զարգացումը⁶:

ՀՀ-ում մեղվաբնտանիքների քանակն ավելացնելու և դրանց մթերատվությունը բարձրացնելու համար անհետաձգելի խնդիր պետք է դառնա ծրարային մեղվաբնտանիքների և մասնավորապես, Մեղրիի հայկական դեղին ու Բերդի հայկական գորշ մեղուների բեղմնավորված մայրացուների արտադրության ծավալների կտրուկ ընդլայնումն ու դրանց իրացումը նախալեռնային և լեռնային գոտիներում:

Համեմատած 2001-2005թթ. հետ՝ 2006-2010թթ. ընթացքում ազնվացել բեղմնավորված մայրացուների տարեկան միջին արտադրությունն աճելու է ավելի քան 3.5-4.0 անգամ, իսկ ծրարային մեղվաբնտանիքներինը՝ համապատասխանաբար 2.2-2.6 անգամ:

Հեռանկարում հանրապետության լեռնային տարածքի վրա հնարավոր է, օրինակ, միջգոտիական մեղրատու ապրանքային ծրարային մեղվաբուծական հարահուսի զարգացումը, որի օգնությամբ մի շարք լեռնային տարածաշրջաններում (հատկապես ալպյան մարգագետինների գոտում) կարելի է յուրացնել չօգտագործվող մեղվային արտավայրերը: Դրա զարգացումը զգալիորեն սահմանափակվում է ծրարային մեղվաբնտանիքների բավականաչափ քանակության բացակայությամբ, որոնք կարելի էր ձեռք բերել ցածրադիր գոտում (օրինակ, Մեղրիում հայկական դեղին և Բերդում հայկական գորշ մեղուների բազմացման հատուկ տոհմային տնտեսությունների ստեղծմամբ), ինչպես նաև լեռնային տարածաշրջանների տրանսպորտային ցանցի թույլ զարգացմամբ (իհարկե, առանձին դեպքերում արդարացվում է բարձր լեռնային գոտի մեղվաբնտանիքների ներբերման և այնտեղից էլ ապրանքային մեղրի փոխադրման համար օդային՝ ուղղաթիռների և գրաստային՝ ձիաուժի օգտագործումը):

Այսպիսով, շուկայական տնտեսավարմանն անցնելու պայմաններում մեղվաբուծության գոտիական մասնագիտացված գործելաձևի արմատավորումը կապված է ոչ միայն մեղվաբնոցների սպասարկման ուղղածիզ հարահոսային տեխնոլոգիայի մշակման, այլև ենթաճյուղի զարգացման ագրոկլիմայական ու սոցիալ-տնտեսական նախադրյալների համակողմանի հաշվառման հետ, որոնք ամբողջությամբ իրագործվում են քննարկվող ենթաճյուղի գոտիական համակարգի ձևավորման և նրա տնտեսական արդյունավետության բարձրացման գործընթացում: Վերոհիշյալ տնտեսակազմակերպչական միջոցառումները խթանելու են մեղվաբուծական մթերքների արտադրության գծով խոշոր մասնագիտացված տնտեսությունների ձևավորմանը և ամրապնդմանը, ինչպես նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացմանն ու լեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերի պահպանությանը:

⁶ ՀՀ ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում (մասնավորապես, 1960-ական թվականների կեսերին) հաշվի առնելով հայկական դեղին (լեռնային գոտու) և գորշ (անտառային գոտու) մեղվատեսակների կենսաբանական առանձնահատկությունները՝ Մեղրիում և Բերդում հիմնվեցին համապատասխան մեղվատեսակների բուծման հատուկ տոհմային տնտեսություններ՝ մեղվաբուծարաններ, հայկական դեղին և գորշ մեղվի մայրացուներ բուծելու համար, որոնց հիման վրա վերոհիշյալ շրջաններում ստեղծվեցին արգելանոցներ (տե՛ս «Հայաստանի գյուղատնտեսական քննազնային քարտեզագրությունների տեսություն», Եր., 1995, էջ 114, Գ. Ավագյան, Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը, Եր., 1970, էջ 363):

В. Г. МАНАСЯН - *Поясная специализация пчеловодства в РА как фактор повышения экономической эффективности подотрасли.* - В статье отмечается, что в условиях перехода к рыночной экономике одним из путей повышения экономической эффективности пчеловодства в РА является формирование новой территориальной системы поясной специализации подотрасли. В основу формирования таких систем кладется принцип вертикального, конвейерного использования временных различий начала и окончания цветения медоносов, влекущий за собой быстрое перемещение пасек из одного высотного пояса к другому, что позволяет, при определенных условиях, удлинить рабочий период пчелиной семьи и резко повысить ее производительность. На основе полученных результатов выявлению, что низинный пояс отличается непродолжительными и слабыми взятками, а горный, наоборот, продолжительными и сильными.

Автор подчеркивает, что в пчеловодстве, так же, как и в других подотраслях аграрного сектора, могут эффективно использоваться как поясные различия в производстве сельскохозяйственного продукта, так и особенности сезонного развития природы.